


սկզբնապէս յունական երկրաչափութեան ընդթը Թաղէսից մինչև Պլատոնը: Ապեհուլացեան այժմ ուղղուած է ընդհանուր օրէնքին. թէպէտ թոյլատրուած է երկրաչափական գործնականը, բայց այն երկրորդական արժէք ունի: Տրամաբանական ապացոյցը այժմ առաջին տեղն է գրուում և ամեն կերպ յետ է մղում հայեցողութիւնն ու փորձը: Դեգուիտիւ եղանակով օրէնքները միաբար կապուած են իրար հետ: Այսպէս է բնորոշուած նաև բարձր դպրոցների երկրաչափութիւնը: Ժողովրդական դպրոցում յամենայն դէպս երկրաչափութեան գործնականն է գլխաւորը, իսկ տեսական օրէնքները միայն ցանկալի յաւելուած են. մինչդեռ բարձր դպրոցները դիտական ոգով ձգտում են օրէնքի իմացութեանը, իսկ գործնականը նրա համար գործադրութեան միջոց է ծառայում. այնտեղ՝ տեսանելի փորձն է գլխաւորը, այստեղ՝ տրամաբանական ապացոյցը:

4. Ասիւնան. ձեմարտրեան իմացութեան զուտ գիտական ձգտումն, սպեկուլատիւ եղանակով երկրաչափական օրէնքների որոնումն և նրանցից գիտական մի շեք կառուցանելը: Պլատոնն իր անալիտիկ ապացուցամեթոդով առաջ է գնում մինչև երկրաչափական արքսիոմաները. նրա աշակերտները փորձում են կառուցանել ամբողջ երկրաչափութեան շէքը. այդ բանը վերջապէս առաջին անգամ յաջողուած է Եւկլիդէսին: Երկրաչափութիւնը այժմ միանգամայն դաւնում է վերացական դիտութիւն իսկ տրամաբանութիւնը նրա միակ իմացական դէմքը: Գործնական երկրաչափութիւնը արհամարհում է՝ որպէս վսեմ գիտութեան անարժան բան: Երկրաչափութեան այս տեսակը դիտական ուսումնասիրութեան նիւթ կարող է լինել:

Շարունակելի

Ա. Օ



ԲԺ. Պաթ. Յովհաննիսեանք, ձեռագիր տետրակներ.

2. Տաղեր, մեղեդիներ, շարականներ, հոգևոր և աշխարհիկ հայերէն ու թուրքերէն երգերի թերթիկներ. մեծ. 6×4 ս. մ. ունի թռչնադիր սկզբնաառեր և լուսանցքադարձեր: Գրութիւնը նետր: Ամբողջութիւն կազմող երգեր են.

## 1. Տաղ ուրախութեան

Ա. Հայ մտաք ամիս մարտին,  
Մառերն ամէն ծաղկին,  
Հոտն դայր դարնանային  
Լոյսն ելնէ Հայոց Ձատկին:

Երուսաղէմ Սուրբ քաղաքին  
Ամէն ազգ հոն ժողովին.  
Հաւասար ուրախանային  
Լոյս ելնէ Հայոց Ձատկին:

Հայ ու հապաշ ու ասորին  
Շուրջ դան սուրբ դերգմանին,  
Խնդերքն է Լուսաւորչին  
Լոյս ելնէ Հայոց Ձատկին:

Մնունքն Բեթղէհէմին,  
Աշխարհս ի հոն հաւաքին,  
Փառք ի բարձունս ասէին,  
Լոյս ելնէ Հայոց ազգին:

Բեղերն ի սուրբ Յորդանանին  
Քս ի ջուրն մկրտին,  
Ամէնքն ի մեղաց մաքրին,  
Լոյս ելնէ Հայոց Ձատկին:

Փորձումն ի յանապաւին,  
Մի՛ տար զմեզ ի փորձութիւն,  
Պահէ՛ք պատուիրանին,

Լոյսն ելնէ Հայոց ազգին:  
Յս դայ ի ճանապարհին,  
Տունն դայ Ձաքէոսին,  
Ելեալ ի ժանտաթղենին,  
Լոյս ելնէ Հայոց Ձատկին:

Ի Բեթանիա դային  
Ննջումն Ղազարոսին,  
Չորսօրեայ մեռեալ յարին,  
Եւ քորքըն ուրախանային:  
Բազմեցաւ յաւանակին,  
Ժողովք փառաբանէին,  
Հանդերձ տարածանէին,  
Օրհնեալ եկեալ ասէին,  
Լոյս ելնէ Հայոց ազգին:

Տաճարն ի Սողոմոնին  
Սաստէր հատաւաճառին.  
Ծերք և տղայք օրհնէին,  
Լոյս ելնէ Հայոց Ձատկին:  
Վերնատունն ի Յուսէփին  
Սկիզբն արաւ պատարագին,  
Յիշատակաւ Նոր ուխտին.  
Լոյսն ելնէ Հայոց Ձատկին:

Բ. Եղբարք, եկայք ուրախացուք, ահա այգին ծաղկեցաւ.  
Նոր արիւսեալն առաւօտուն այսօր յայգին ծագեցաւ:

Բամից արքայն Տէր մեր Յս նոր դարուն մեզ ծագեցաւ.  
Նոր դարուն և նոր ծիածան, նոր արեգակ ծագեցաւ:

Դեղ վայելուչ զարդարեցան ծառերն ծաղկածաւալ.  
Ձայն ածեն պիւլպիւլն ու զամբին ի ճղին ծաղկածաւալ:

Սարսափ երգ ներբողական, ներածէր զարմանազան.  
Առաւօտէ մինչ յերեկոյ դովք ասէր վարդ ի սիրոյ:

## ՏԱՂ ՍԻՐՈՅ

Գ. Այգ վերի լեանէդ ի վայր

Չոր անուշիկ, մէջն անցանի, հայ.

Թուխ մանուկ մի դուրս է ելիր,

Չեաք լիու երեսն է լուսնիք. հայ,

Լուացեր, հայ, լըւացեր,

Դարձեր ջրին հարցմունք եղեր, հայ,

Ջուր դու ի որ լեռնէն կուգաս,

Իմ պաղուկ ջրիկ է'անուշիկ, հայ,

Ես այն լեռնէն կուգամ

Որ հին ու նոր ձիւնն ի վրան, հայ,

Ջուր, դուն ի որ առուն կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ է'անուշիկ, հայ,

Ես ի այն առուն կերթամ,

Որ փունջը չատ է մանուշակին, հայ,

Ջուր դու, ի որ այգին կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ է'անուշիկ, հայ,

Ես ի այն բոյս կուջրեմ,

Որ տակն խոտ բերէ դառին, հայ,

Ջուր դու, ի որ պաղչայ կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ է'անուշիկ,

Ես ի այն պաղչան կերթամ,

Որ պիւլպիւլին ձայնն կուգայ, հայ,

Ջուր դու, ի որ աղբիւր կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ է'անուշիկ, հայ,

Ես ի այն աղբիւր կերթամ,

Որ գայ իմ տէրն ջուր իմէ, հայ,

Բարեւմ ի դէմ երթամ,

Ապա սիրովն յաղենամ, հայ,

### ԿԱՐԵԻՈՐ ԼՈՒՐԵՐ

Հայ ԲԱՐԵՐ.— Ես լրագիրը առնելով Խարբերում հրատարակուող «Եփրատ» լրագրից, գրում է, որ Հայ—քուրդերը ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց Հայ ծագման մասին և չգիտեն հայերէն։ Դրանք տարբերում են իսկական քրդերից իրանց բարբառով և բարբով, որ կրում է հայկական դրոշմ, իրանց նախնիներից պահպանել են միայն քրիստոնէական կրօնը, որը միակ անջրպետն է հանդիսանում մահմեդական քրդերի հետ ձուլուելուն։

Կ. Պօլսոյ «Հայրենիք» լրագիրը հրաւիրում է հայերի միահամուռ գործակցութիւնը այս հայ քրդերի կրթու-